№ 190 ՆՈՅԵՄԲԵՐԻ 4 (16) 1878 ՆՈՅԵՄԲԵՐԻ 4 (16) № 190

ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։

Ադրեսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական վերջին անցքերը։—Ներքին տեսութիւն։ Նամակ Ջալալ-Օղլուց։ Նամակ Գանձակից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Ֆրանսիա։ Գերմանիա։ Անգլիա։ Արտաքին լուրեր։—Խառն լուրեր։—«Մշակի» հեռագիրներ։ — Յայտարարութիւններ։ — Տեղեկացոյց։ — Բանասիրական։ Մարդը գոյութեան կռիւի մէջ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԱՆՑՔԵՐԸ

—

Աւստրօ-Ունգարիայի և Թիւրքիայի մէջ եղած թշնամական գրագրութենից յետոյ Բօսնիան և Հերցեգովինան գրաւելու մասին հանգստութիւն տիրեց այդ երկու պետութիւնների մէջ։

Անկարելի է ենթադրել, որ աւստրօ-ունգարական կառավարութիւնը ահագին ծախսեր անելով և բաւական զօրքեր զօրելով, մտադիր էր միայն կատարել Բերլինի կոնգրէսի վճիռը և իր սեփական շահերը չունենար ի նկատի։

Ժողովրդական ապստամբութիւնը ճնշելուց յետոյ Աւստրօ-Ունգարիան բաւականացաւ միայն հիւսիսային Բօսնիա իր ձեռքն առնելով։ Մի կողմից այս հանգամանքը, միւս կողմից թիւրքաց կառավարութեան քաղաքականութիւնը Ռուսաստանի վերաբերութեամբ ցոյց են տալիս, որ Թիւրքիայի և Աւստրիայի մէջ համաձայնութիւն է կայացել։

Այս հանգամանքները ի նկատի առնելով ռուս «Голосъ» լրագիրը կարծիք է յայտնում, որ Դունայ գետի աջ ափի վրա գտնվող զօրքերը ապահովացնելու և պատահմունքներին պատրաստ լինելու համար անհրաժեշտ է, որ Ռուսաստանը իր ձեռքին պահէ Դունայ գետի ստորին ընթացքը և իր արևմտա-հարաւային նահանգներում կենտրոնացնէ երեք հարիւր հազար զօրք։ Այս դէպքում յիշեալ լրագրի կարծիքով Ռուսաստանը ապահովված կը լինի Աւստրօ-Ունգարիայի երկդիմի քաղաքականութենից և զանազան պատահարներից։

Ֆրանսիայում քաղաքական կեանքը շատով կենդանութիւն կը ստանայ. բացի այն որ արդէն ընտրվեցան պատգամաւորներ սենատի մի մասը վերանորոգելու, այդ բաժնի անդամների տեղ նորերին ընտրելու համար, բացի այդ շուտով կը սկսվեն ազգային ժողովի նիստերը, որոնք, ինչպէս երևում է լրագիրների հաղորդած տեղեկութիւններից, խոստանում են բաւական աղմկալի լինել։ Ազգային ժողովը չի բաւականանայ քննելով միայն եկող տարվայ բիւդժէտը, նա կը վիճաբանէ և մի քանի քաղաքական հարցերի վերաբերութեամբ։

Սօցիալիստների դէմ ուղղած օրէնքը արդէն գործադրվում է Գերմանիայում։ Օրէնքի հրատարակվելու օրից մինչև այժմ բազմաթիւ սօցիալական լրագիրներ արգելվեցան։ Դրանց խմբագիրներին չէ աջողվում զանազան միջոցներով օրէնքի առաջն առնել։ Քանի որ օրէնքը չէր հաստատված շատերը կարծում էին, որ գերմանական կառավարութիւնը խստութեամբ կը գործադրէ օրէնքը մինչև անգամ առաջադէմ կուսակցութեան վերաբերութեամբ։ Այդ կարծիքները սխալ դուրս եկան։ Գերմանական կառավարութիւնը շատ զգոյշ է վարվում օրէնքի հետ։

Անգլիական լրագիրները տպեցին Բօդօպեան մասնաժողովի զեկուցումն, որ ստորագրված է

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՐԴԸ ԳՈՅՈՒԹԵԱՆ ԿՌԻՒԻ ՄԷՋ

—

Բիդժօտը ուշադրութիւն է դարձնում այն բանի վրա, թէ հին ժամանակներում վայրենիները չէին սպառվում, չը նայելով նրանց անընդհատ յարաբերութիւններին կլասիկական ազգերի հետ։ Դարվինը տեսնում է դրանում այժմեան քաղաքակրթութեան սաստիկ ազդեցութեան ապացոյցը, որ մահացուցիչ ներգործութիւն է անում նախնական ժողովուրդների վրա։ Թէպէտ Բիդժօտի յառաջ բերած փաստը խիստ պարզ կերպով բացատրվում է նրանով, որ այն վայրենիները, որոնց պատահում էր զարկվել հին քաղաքակրթված ազգերի հետ, ըստ մեծի մասին պատկանում էին նրանց հետ մի և նոյն մարդաբանական (антропологическій) յատկութիւններին, և այս պատճառով փոքր չափով ենթարկվում էին վարակիչ հիւանդութիւնների։ «Մի և նոյն պատճառներով կարելի է բացատրել (գոնէ մասամբ)—ասում է Մեչնիկով—և սպառման երևոյթի բացակայութիւնը Կովկասի ժողովուրդների մէջ, չը նայելով նրանց կախեալ դրութեանը ռուսներից, և չը նայելով զանազան տեղերում նրանց բաւական աղքատութեանը, և առհասարակ վատ կենսական պայմաններին,—որոնց ընդհակառակն, մի քանի ժողովուրդներ թէև մանգօլական արեան մաքուր ծագումից, որպէս, օրինակ, կալմիկները, յարաբերութիւն ունենալով մի և նոյն ռուսների հետ, անհամեմատ մեծ թիւով ոչնչանում են *)։»

*) Իր ծանօթութեան մէջ պ. Մեչնիկով ասում է, թէ Կովկասի ժողովուրդների մէջ սպառվելու բացակայութիւնը նրան յայտնի է այն տեղեկութիւններից, որ նա ստացել է իր անձամբ Կովկասում եղած ժամանակ։ Իսկ տեղեկութիւնները կալմիկների վերաբերութեամբ նա քաղել է ռուսաց «Աշխարհագրական Ընկերութեան» 1873 թ. հոկտեմբերի լուրերից, որոնցից յայտնվում է, թէ մի գիւղում «Улусъ» 1873 թ. պէտք եղաւ հարկերը ամեն մէկ տաղաւարի (кибитка) վրա 7 ռուբլ 58 կոպէկից աւելացնել 8 ր. 80 կ., այն պատճառով, որ տաղաւարների ամբողջ թվից պակսել էր 433 ընտանիք, որոնցից ոմանք հիւանդ էին, ոմանց մէջ մնացել էին միայն անչափահասները, իսկ 148 ընտանիք բոլորովին ոչնչացել էին նոյն գիւղում վարակիչ հիւանդութենից։

Այժմ բոլորը հասել են այն համոզմունքի, թէ այսպիսի մի խոշոր և բաղդրեալ երևոյթ, որպէս է ժողովուրդների սպառվելը, յառաջ չէ գալիս որ և իցէ մէկ պատճառից, մինչև անգամ և ոչ պատճառների մի ամբողջ շարքից,—այլ շատ, և երբեմն բազմատեսակ հանգամանքների դումարից։ Ուրեմն, մեր նկատած բնաբանական պատճառները պէտք է բաւական չը համարել։ Դրա համար մի ժողովուրդ, որ չէ գտանվում ուրիշ ոչնչացնող պայմանների ներքոյ, կարող է մինչև անգամ ուղղվել և վերջումը ամրապնդվել։ Այսպէսով մի քանի նախնական ազգեր, որպէս, օրինակ, տօգանցիք, չեն սպառվում, իսկ ուրիշները թէև շարունակում են ոչնչանալ, բայց աւելի փոքր չափով քան թէ առաջ, որը առիթ տուեց Գերլանդին յայտնել խիստ գեղեցիկ յոյսեր պոլինեզիացիների ապագայի մասին։ Եւրոպական ժողովուրդները արագութեամբ ուղղվեցան խիստ սաստիկ և բազմաթիւ վարակիչ հիւանդութիւնների համբերելուց յետոյ։ Կարելի է, նեգրները և մալայեցիները, որոնք հին ժամանակներից գտանվում են շատ ուրիշ ժողովուրդների հետ յարաբերութեան մէջ, իրանց այժմեան տոկունութիւնը վաստակել են ոչ միանգամից, այլ աստիճանաբար և զուցէ մեծ զոհերի գնով։

Այսպէս, գոյութեան կռիւի մէջ, ժողովուրդների մարմնակազմական յատկութիւնների հետ, կատարվում է և մի ուրիշ մրցութիւն, որը լինում է աւելի գիտակցական հիման վրա։ Վերջինի մէջ մի ժողովուրդ ձգտում է կամ բոլորովին արտաքսել մի ուրիշին, կամ դնել նրան աւելի կամ սակաւ կախված դրութեան մէջ իրանից։ Որքան աւելի նման են երկու մրցող ժողովուրդները, այնքան յաճախ լինում է առաջինը, որքան սակաւ է նրանց մէջ ընդհանուր նմանութիւնը, այնքան շուտով կարող է կատարվել երկրորդը։ Այստեղից յայտնվում են իշխողներ և հպատակներ։ Մրցութեան այդ ձևի մէջ զլխաւոր դերը խաղում է քաջութիւնը, որ սուրի ուժով աւելի զօրաւոր մի ժողովուրդ նուաճում է իրանից տկարին։ Գոյութեան կռիւի մէջ դա կոչվում է արիւնոտ մրցութիւն։ Մարդկային պատմութիւնը ունի իր մէջ հաղարաւոր օրինակներ, որ այս պայմաններով վաստակած յաղթութիւնը երկարատև լինել չէ կարող, երբ յաղթողը գերազանցում է միմիայն իր ֆիզիկական կոշտ—կոպիտ ուժով, երբ նրա հետ կապված չեն նաև քաղաքակրթութեան զարգացման առաւելութիւնները։ Մանգօլական ցեղերը, արաբները մի ժամանակ հեղեղի նման անցան երկրագնդի մի բաժնի երեսից, բայց իրանց աշխարհակալութիւնների մէջ գտան իրանց ոչնչանալը։

Քաջութիւնը, որ յառաջ է բերում Դարվինը որպէս միակ էական զօրութիւններից յաղթութեան մէջ, նրանչանակութիւնը պէտք է այնքան չը վերագրասել, որքան կարծվում է։ Անվիճելի է, որ մի քանի դէպքերում քաջութիւնը ցոյց է տուել ոչ սակաւ ծառայութիւն, բայց միանգամայն զարգացնել ժողովուրդի մէջ պատերազմական ոգին, շատ անգամ տանում է նրան դէպի կործանում։ Մրցութեան անարիւն և խաղաղ ձևը գոյութեան կռիւի մէջ տալիս է առհասարակ անհամեմատ աւելի հաստատուն հետևանքներ, քան թէ պատերազմական յաղթութիւնը։ Քաջութիւնը, որ սերտ կերպով կապված է լինում անկախութեան ոգու հետ, ունի իր արդարացի կողմերը այն դէպքերում, երբ մի ժողովուրդ ձգտում է հիմնել իր գոյութեան արմատները հայրենի հողի վրա, և ազատ մնալ օտար ճնշումից։ Իսկ քաջութիւնը որ կապված է աշխարհակալութեան սնոտի փառքերի հետ, միշտ վնասակար է դառնում։ Մինչև անգամ այն ժողովուրդները, որոնք հասել էին կրթութեան բարձր աստիճանին, որպիսի են հռոմայեցիները և յոյները, սաստիկ պատժվեցան իրանց պատերազմասիրութեան համար։ Այժմեան եւրոպական ազգերից նոյնպէս ֆրանսիացիք ցոյց են տալիս մի քանի նշաններ մերձաւոր անկման, նշաններ, որ ի հարկէ կապված են նրանց անչափ պատերազմասիրութեան հետ։

Քաջութիւնը, պատերազմական ոգին, սուրը գոյութեան կռիւի մէջ, այն ժամանակ միայն իրանց իրաւացի կողմերը ունեն, երբ մի ժողովուրդ գործ է դնում նրանց ոչ իբրև կեանքի նպատակ, այլ հարկաւորած ժամանակ, որպէս կեանքը պահպանելու միջոցներ։ Անասունները նոյնպէս բնական զէնքեր ունեն ինքնապաշտպանութեան համար, բայց երբ մի անասուն իր զէնքերը գործ է դնում միւսներին գիշատելու համար, նա գազան է. իսկ գազանները մեծ բազմութիւն չեն կազմում անասունների հասարակութեան մէջ. գայլերի, վագրների և առիւծների թիւը շատ փոքր է լինում։ Սուրը և քաջութիւնը մարդերի մէջ, որպէս արտայայտութիւն ներգործական (активный) զօրութեան, որքան մաշում են օտարներին, նոյնքան և դառնում են իրանց գործածողների դէմ։ Սուրը, իրաւ է, ջարդում է և փչրում բայց ինքն էլ վերջապէս մաշվում, սպառվում է։ Անարիւն մրցութիւնը, որ կատարվում է քաղաքակրթութեան և մարդու մտաւոր զարգացման հիման վրա, թէև ուշ, բայց վերջապէս յաղթող կը հանդիսանայ աւելի քան գազանական կոպիտ ուժը։ Բայց մի ժողովուրդ ինքնուրոյն և անարգել կերպով զարգանալու համար, հարկաւոր է, որ նախ և առաջ նա ազատ լինի օտարների ճնշումից, և իր ոգի ներքև ամուր և հաստատ հող ունենայ. պէտք է, որ նա իր տան մէջ լինի և օտարները չը խանգարեն նրան։ Դրա համար երբեմն հարկաւոր է լինում սուրը։

Դարվինը առաջարկում է և եռանդը և առաքինութիւնը, որպէս յատկութիւններ, որոնց ժողովուրդների մէջ զարգանալը պէտք է որ օգնէ նրանց գոյութեան կռիւում։ Ինչ որ վերաբերում է առաջինին այդ յատկութիւններից, եռանդին, նա ստանում է բարոյական բնաւորութիւն աւելի այն ժամանակ, երբ գործ է տրվում ոչ միայն մի անհատի անձնական բարօրութեան համար, այլ ընդհանրութեան։ Ամեն մի հանգամանքում նա յայտնվում է որպէս կենդանութեան և յաղթութեան նշանաւոր տարր։ Իսկ ինչ որ վերաբերում է առաքինութեան, նրա դերը, որպէս յաղթութեան պայման գոյութեան կռիւի մէջ, երկբայական է։ Որպէս մենք տեսանք նախնթաց գլխում, ինքը Դարվինը ցոյց է տալիս բարեգործական

միայն Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչներից։ Միտները հրաժարվել են ստորագրել զեկուցումը չափազանց կողմնապահ համարելով։ Զեկուցումն լեքն է Ռուսաստանի դէմ ուղղած մեղադրանքներով։ Նոյն իսկ անգլիական լրագիրները վկաների ցուցումները Անգլիայի ներկայացուցչի թելադրութիւն են անուանում։

Վ. Տ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՋԱԼԱԼ-ՕՂԼՈՒՑ

24 հոկտեմբերի

Շատ անգամ պատահած եմ «Մշակի» մէջ յօդուածներ անտառների մասին։ Հարկաւոր եմ համարում մի քանի տեղեկութիւններ հաղորդել Ջալալ-Օղլու շրջանի մէջ գտնվող անտառների մասին։ Անտառական վարչութեան տնօրէնութիւնները անհասկանալի են, ոչ թէ միայն բոլորովին անկիրթ ժողովուրդին, այլ և շատ ոչ քիչ հասկացողներին։ Փաստեր վերցնենք։ Օրինակ, այստեղ գտնված երկու իրար հարևան անտառապետութիւնների, Լօռու և Ղալաքլիսայի, թէ փայտի և թէ փայտեղէնի համարեայ միակ վաճառանոցը Ալէքսանդրօպոլ քաղաքն է. սրանցից Լօռու անտառապետութիւնը բաժանված է Ալէքսանդրօպոլ տանող չօսսէի ճանապարհից Դվալ անուանեալ ահագին բարձրութեամբ սարերով, իսկ Ղարաքլիսայի անտառապետութեան անտառների մեծ մասը նոյն իսկ չօսսէի վրա են։ Թուած հանգամանքները աչքի առաջ ունենալով, այս երկու անտառապետութեան ունեցած տակսաները մի անհասկանալի տնտեսական օրէնքների վրա են սահմանված։ Լոգիկան ասում է, որ ինչքան ծախելու իրեղէնները մօտ լինեն վաճառանոցից և նրանց տեղ հասցնելը հեշտ լինի, այնքան նրանց տեղական գինը բարձր կը լինի և ընդհակառակն, որքան իրեղէնները հեռու են վաճառանոցից և նրանց տեղ հասցնելը դժուար է, այնքան տեղական գինը ցածր է։ Ես գիւղատնտեսական գիտութիւնների և նրանց օրէնքի հետ ծանօթ չեմ, բայց հաղիւ թէ իմ ասածը որ և իցէ օրէնքի հակառակ լինի։ Անտառապետական վարչութիւնը հերքում է այս ակիսման։ Ղարաքլիսայում չօսսէի վրա Ալէքսանդրօպոլ տանելու մի սաժէն փայտի տակսան նշանակում են միայն երկու մանէթ, իսկ նոյն տեղ տանելու համար ահագին սարերի ետեւի դժուար տեղերից (Լօռուց) սաժէնը նշանակում են տասը մանէթ։ Այս բաւական չէ։ Ես դեռ մայիս ամսի վերջերին մէկ օր Ղարաքլիսայում պատահելով բոլոր շրջակայ գիւղերի տանուտէրներին և հետաքրքրվելով իմացայ, որ նրանք կանչված են տեղական անտառապետի մօտ [illegible] նրա յայտնել էր, թէ այնուհետև չորս փայտ և փայտեղէն գնելիս պէտք է վճարեն միայն նշանակած տակսան առանց %, իսկ Լօռու անտառապետը մինչև այսօր էլ մանէթին տասը կոպէկ % առնում է ամեն տեսակ վերցնողից։

* * *

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԿԻՑ

9 հոկտեմբերի

Այս տարի Գանձակում քանի մի նոր երեւոյթներ են նկատվում ազգային գործերի մէջ. աւելանում է վարժապետների և վարժուհիների թիւը, իսկ հները դարձեալ մնում են. ժողովուրդը բողոքում է հոգաբարձուների դէմ, որ ուսումնարանի դրամագլուխը չը պակասացնեն ընդունելով թեմական տեսչի այն շտատը, որին նայած չորս կամ հինգ տարուց յետ ուսումնարանը զուրկ պէտք է մնայ դրամագլխից, իսկ հոգաբարձուները, իբրև պատասխանատու ժողովուրդի առաջ, հակառակվում են թեմական տեսչի շտատին, որով նա, փոխանակ մէկ վարժուհի նշանակելու օրիորդաց դպրոցի համար, նշանակել է երկուսին։ Հոգաբարձութիւնը պահանջում է որ երկսեռ դպրոցների տեսուչը լինի միայն տեսուչ ուսումնարանի և թուաբանութեան վարժապետ և թողնի թեմական տեսչի օգնականութիւնը գիւղերի վրա (կասկածելի է որ հոգաբարձութիւնը ունենայ իրաւունք այս տեսակ պահանջների, թէև շատ ուղիղ պահանջ է), իսկ տեսուչը բացատրելով այս առաջարկութիւնը կամ պահանջը, բացի տեսչութենից յանձն չէ առնում մինչև անգամ թուաբանութեան դասախօսութիւնը, որը դրված է նրա վրա։

Ժողովուրդը տեսնելով այս ամենը, տեսնելով նաև տեսչի հին և նոր հոգաբարձուների հետ ունեցած երկպառակութիւնները, յուսահատուած է և կասկածում է դպրոցի յառաջադիմութեան վրա. նա կասկածով է նայում դէպի ուսումնարանը, որը իր ողջ գոյութեան ընթացքում, մանաւանդ վերջի երեք տարվայ ընթացքում, որը համեմատելով առաջինին ամենալաւն է եղել, չէ տուել նրան գոնէ մի պատուական աշակերտ, և այսօր, տեսնելով թեմական տեսչի ուսումնարանի յառաջադիմութեան համար հոգատարութիւնը, ուրախութեամբ ցանկանար մինչև անգամ ողջ դրամագլուխը զոհելու և նորէն տեղը լքցնելու։ Քաղաքիս իշխանները մէկ թերթ ձեռքներին ստորագրել են առաջարկում ժողովուրդին, որը ուրախութեամբ է ընդունում, որ հոգաբարձուները իրաւունք չունենան դրամագլխից մի կոպէկ ծախսելու։

Քանի որ ուսումնարանական վարչութիւնը միշտ լոկ խոսքերով է յառաջադիմութիւն խոստանում, իսկ ուսման դանդաղ և համարեայ թայլ գնալու մասին դանդաղ ծաղրալի պատճառներ բերում մեղադրելով այս կամ այն հոգաբարձուին կամ նախագահին, քանի որ տեսուչը, որի պարտականութիւն է կարգաւորել նրան յանձնած ուսումնարանը և որի պատասխանատուութեան տակն է ուսումնարանի բոլոր ուսուցչաց կանոնաւոր դասատուութիւնը և որից ինքնըմիայն պահանջում է ուսման առաջադիմութիւնը, իսկ նա չէ կատարում իր պաշտօնը իսկապէս, այ պատասխանատու է համարում իրան միայն ուսումնական մասի մէջ,—ժողովուրդը իրաւունք ունի խաբված լինելով բողոքել թեմական տեսչի ի վնաս ուսումնարանի արած նորանոր մեծամեծ կարգադրութեանց դէմ։ Իսկ եթէ նրանք խղճմտաբար կը վարվեն, կը ճանաչեն իսկապէս իրենց պարտականութիւնները, նաև կը պահանջեն որ տեսուչները ևս ճանաչեն իրենց պարտականութիւնները և ազգի իրաւացի պահանջներին զանազան ծաղրալի պատճառներ չեն տայ,—այս ամենը տեսնելուց յետ մենք մեծ ուրախութեամբ պատրաստ ենք ամեն կերպ օգնելու մեր ուսումնարաններին և չը խառնվել բոլորովին նրանց վարչութեան գործերի մէջ և ընդդիմանալ նրա ուղիղ կարգադրութեանց։

Պ. տեսուչ Եպիսկոպոսեանցը թողնելով բոլոր վերոյիշեալ կէտերը առանց պատասխանի, գուցէ մեզ կը պատասխանէ որ անկարելի էր ազգի ցանկացած աշակերտները տալ, որովհետև անցեալ տարում, երբ նրա աշխատանքի պտուղը պէտք է երևար և մի չքեղ հարցաքննութեան ժամանակ ճանաչվեր, հոգաբարձուները սկսեցին վիճել նրա հետ, հաչիւ չը տվին նրա արդար պահանջին ինչպէս հարկն է. նրա քանի մի հակառակորդները բամբասեցին նրան վիճակաւոր առաջնորդի մօտ և ի զուր համարեցին նրա տակուն աշխատանքները, ատեցին նրա ազգին անձնուիրութիւնը և սրանց նման շատ զրպարտանքներ խոսելով կոտրեցին նրա սիրտը և այս մասին ինչպէս նա ինքն էլ կը վկայէ (չեմ ասում թէ վկայում է) քիչ սառն կերպով է վարվել իր պաշտօնի մէջ...

Ասացէք խնդրեմ, պ. Եպիսկոպոսեան, ինչով է մեղաւոր մեր նոր սերունդը, մեր յոյսը, ազգին բարի ապագայ խոստանող թարմ ոյժը որ դուք, իբր մխիթարելով ձեր կոտրված սիրտը, սառն էք նայել, ինչպէս խոստովանվել էք, նրա ուսման և յառաջադիմութեան վրա։ Եւ միթէ այդ վարվողութեամբ դուք երևակայում էիք որ վնասում էիք ձեր հակառակորդներին...

Ասում են որ տեսուչը հրաժարական է ուղարկել թեմական տեսչին։ Այս տեսակ հրաժարականներ նա ուղարկել է ամեն տարվայ ուսման շրջանի սկզբներում մի նոր պատճառ

զգացմունքների վարժելու «անկասկած վնասը» ցեղերի բնական դրութեանը։ Դրա վրա պէտք է աւելացնել և այն որ վարժեցնելով կարեկցութիւնը, զարգացնելով զգացմունքը, մարդիկ դառնում են սակաւ պիտանի գոյութեան կռիւի համար, որը մինչև անգամ իր բարձր ձևի մէջ կապված է ուրիշներին ցաւեր պատճառելու հետ։ Յայտնի է, որ կարեկցութիւնը առհասարակ աւելի յատուկ է այնպիսի անձերին, որոնք կանգնած են մի կողմում, իրանց հեռու են պահում և չեն մասնակցում ժողովուրդների գոյութեան կռիւի մէջ։ Այս հոգեբանական երևոյթի վրա ուշադրութիւն դարձրեց Հերբերտ Սպենսերը, որ հանում է հետևեալ եզրակացութեան. «Մօտ ծանօթութիւնը աղքատութեան և անբաղդութեան արտաքին արտայայտութիւնների հետ—ասում է նա—անպատճառ պահանջում է նրան հաւասարաչափ սառնասրտութիւն. և այդ սառնասրտութիւնը է անբաժան արբանեակ անարիւն մրցութեան իւրաքանչիւր հասարակութեան առանձին անդամների մէջ, և որպէս իսկապէս է նա անբաժան արբանեակ արիւնոտ մրցութեան զանազան հասարակութիւնների մէջ։»

Հետևանքը, որ կարող է առաջ գալ մի նախնական և զարգացած ժողովրդի մրցութիւնից, խիստ յաջող կերպով արտայայտված է Միշլէի շարադրութեան մէջ։ «Բաղաքակրթված կեանքը և վայրենի կեանքը—ասում է նա—այնքան հակառակ են մինը միւսին, որ մի և նոյն ժամանակ նրանք չեն կարող ապրել մէկ հողի վրա, և նրանց մրցութեան մէջ յաղթութիւնը անսխալ կարելի է նախագուշակել։ Այդ—է կռիւը հասունացած մարդու

տալով իր պաշտօնի չարունակելու անկարելութեան մասին։ Սակայն այս անկարելութիւնը անկարելութիւն չէ մնացել (և գուցէ չը մնայ), երբ թեմական տեսուչը խնդրել է իր օգնական տեսչին չարունակել պաշտօնը։ Իսկ յետինը չափազանց պատուելով առաջինին, չը նայած «տգէտ և կոպիտ» ժողովուրդին, որի հետ ոչինչ լաւ գործ չէ կարելի բռնել և յառաջ տանել, ընդունել է թեմական տեսչի խնդիրը և մնացել իր պաշտօնի մէջ։

Ամսիս մէկին տեղոյս Գրիգոր Լուսաւորչի եկեղեցում ձեռնադրվեցան երկու քահանայք գիւղերի համար։ Ձեռնադրող Սինոդի անդամ Մեսրոպը եպիսկոպոսն էր, թեմիս վիճակաւոր առաջնորդ սրբազան Գաբրիէլ արքեպիսկոպոսի թոյլատուութեամբ։

* * *

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ հաղորդում են ՇՈՒՇՈՒՅ, որ հոկտեմբերի 22-ին այնտեղ Ս. Յովհաննու եկեղեցում ձեռնադրվել են տասն և երկու նորընծայ քահանաներ։ Ձեռնադրութիւնը հանդիսով և չքեղ կերպով կատարվել է։ Չենք կարող չը յայտնել մեր ուրախութիւնը այդ գործի առիթով. քիչ բան չէ երբ հայ անձնանուէր լուսաւորիչների թիւը տասերկուսով աւելանում է։

—

ԽԱՐԿՕՎԻՑ հաղորդում են որ հոկտեմբերի 24-ին սկսվեց և նոյն ամսի 26-ին երեկոյեան ժամի 8-ին վերջացաւ Խարկովի նահանգական դատարանում բժշկապետ ստատսկի սովետնիկ Կավալչուկովի սպանման գործի քննութիւնը՝ որի մասին արդէն յայտնի է մեր ընթերցողներին։ Երդուեալ դատաւորների վճռով ճանաչված է մեղաւոր, բայց ներողամտութեան արժանի, ծառայութենից արձակված պոդպօրուչիկ Գրիգոր Բեզաբրազով, 48 տարեկան. միւս մեղադրեալը, այրի Մարիա Սամոյլօվնա Կավալչուկովան (սպանվողի կինը) արդարացած է։ Դատարանը վճռեց. պոդպօրուչիկ Բեզաբրազովին զրկել բոլոր իր իրաւունքներից և ենթարկել տաժանակիր պատժի 11 տարի ժամանակով։ Նամակագիրը խոստանում է շուտով հաղորդել մանրամասնաբար ամբողջ գործի ընթացքը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

—

«Indépendance Belge» լրագրի Փարիզի թղթակիցը նոյեմբերի 1-ից գրում է հետեւեալը.

«Չը նայելով որ սենատորական ընտրութիւնները այս րօպէիս ամենահետաքրքիր հարցն է, այնու ամենայնիւ երէկ բոլոր քաղաքական շրջաններում խօսում էին Զվիցերիայի ընտրութիւնների մասին։ Ինչ որ ամենից պարզ երևում է այդ ընտրութիւններից՝ այն է որ կղերականները մի քանի յաղթութիւններ են արել։ Դրանից մինչև կալուածների վերադարձնելը՝ բարեբաղդաբար դեռ մի ահագին քայլ կայ անելու, որը նա երբէք չէ կարող անցնել. բայց մի քանի կէտերի վերաբերմամբ, յիրաւի, նա անակնկալ յաջողութիւններ է արել։ Արդեօք պէտք է այս վերաբերել այս կուսակցութեան զօրեղ կազմակերպութեանը, թէ, ինչպէս շատ հանձարեղ մարդիկ կարծում են, որ նրանք փոքր ինչ չափազանց հեռու և չափազանց արագ գնացին այն պատերազմի մէջ, որ նրանց տուին։ Հաւանական է որ հալածելով եկեղեցական հանդերձի կրելը և ողորմած քոյրերին, տուել էին կաթոլիկներին մի քանի կանոններում՝ հալածման շնորհը։ Նրանք դրանից օգուտ քաղեցին, բայց դրանց յաջողութիւնը շատ առժամանակեայ է, որովհետև դրանց պակսում է միակ բանը որ այդ յաջողութիւնը յարատև անէ.—հաւատքը։ Բոլոր, երբեմն եկեղեցու հպատակ երկիրներում, հաւատը վերանում է։ Կրօնը դառնում է մի միջոց կապված ամեն տեսակ սխալներով և անցեալի ամեն արդարութեան մերժմամբ՝ ոչ մի միջոց չունի պաշտպանվելու։

«Անցան այն ժամանակները, որ մի քառորդ դարուց յետոյ ծաղրալի հրաշքներ ու խայտառակ նենգութիւններ նպաստում էին նրա կեանքը վերադարձնելու՝ այժմ բոլորովին հակառակն է։

«Բայց այսպիսի մի դեռ նշանաւոր և մտնաւանդ լաւ կազմակերպված ոյժի առաջ, պէտք է ուսումնարանին և մանաւանդ մամուլին դիմել. պէտք է արդի օրէնքների վրա հիմնվել։ Ֆրանսիայում, ուր կղերական շարժումը օրէցօր կորցնում է իր ոյժը, բաւական էր, նրան կատարելապէս ճնշելու համար, գործադրել օրէնքները իրանց ամենախիստ ճշդութեամբ։

«Կառավարութեան ամենափոքր անփոյթութիւնը ներկայ օրէնքները գործադրելու մէջ այնպիսի հետեւանքներ է ծնուցանում, որից մարդս սարսափում է։ Թոյլ ես տալի երկու կամ երեք վարդապետների. գալիս են իսկոյն երեք հազարը։ Թոյլ ես տալի հրատարակել մի որ և է կոնդակ, իսկոյն Հռոմի պալատից բղխած բոլոր հրովարտակները հրատարակվում ու քարոզվում են եկեղեցիներում։ Թոյլ ես տալի իրաւունք ունենալ մի ուսումնարան շինելու՝ միւս օրը իսկոյն ծնվում է վարդապետների ժառանգութեան միայն վանքապատկան լինելու օրէնքը, և միլիոնները թափվում են կղերականների դրամարկղների մէջ։ Բայց հէնց որ օրէնքները գործադրելու չընչին ցոյցեր են արտայայտում, եպիսկոպոսները յետ են քաշվում իրանց ամբողջ բանակով։ Սրանք այն մարդիկն են, որոնց համար յանդգնութիւնը ու հնազանդութիւնը ամենադիւրին բանն է. միշտ պատրաստ ձեզ ջարդել՝ եթէ դուք թոյլ էք,—պաշտել՝ եթէ դուք ուժեղ էք։

«Լրագրիները շատ թանձրաններ են տալիս սենատորական պատգամաւորների ընտրութեան մասին։ Ահա այն՝ որ ես հիմնվելով ամենահեշտ տեղեկութիւնների վրա, կարողացայ շինել. ձախակողմեանները պահպանում են իրանց դուրս գնացած սենատորների տեղերը, նրանք բացի այդ՝ ստանում են այլ ևս երեք տեղ Հերոլտի մէջ, մէկը Լուարի և Շերում, երկուսը Էնդրի և Լուարում, երկուսը Լօտ և Գարոննում, հինգը Նօրում, մէկը Մարնում, երկուսը Մեօզում, մէկը Պիւյ դը-Դոմում, երկուսը Լօտում, ընդամենը 22 տեղ. Բուշ-դիւ-Ռոնի, Գարի, Սենէ-Լուարի և Արիէժի մեռած սենատորների փոխանակ՝ պէտք է լինեն հինգ հասարակապետականներ. և այսպէս ուրեմն նրանք կունենան 27 նոր տեղ. և որովհետև սենատում դրանց անդամների թիւը հաշվում է 128, ուրեմն դրանք ամենաքիչը ունեն 155 անդամներ։

«Միւս լրագիրների թիւերը հակասական են, բայց այնու ամենայնիւ եթէ վերցնենք նրանց տուած հաշիւների փոքրն թիւը՝ դա մինչև անգաս 160-ից աւելանում է. բայց թողնենք աւելին, և դարձեալ մեծամասնութիւնը կը մնայ հասարակապետականների կողմը, չը նայելով որ «Le Français» ասում է, որ հասարակապետականները անմեղ են «յաղթութիւն» կանչում և թէ դրանց բերած թուերը անհիմն և հասարակ շարլատանութիւն է։»

ԳԵՐՄԱՆԻԱ

—

Զորեքշաբթի օր Բերլինում կայացաւ վաճառականական պատգամաւորների ժողովը, որը քուէարկեց եռանդուն կերպով ծխախոտի մենավաճառութիւն մտցնելու, և առհասարակ ծխախոտի վրա որ և է հարկ աւելացնելու դէմ։

Հակասօցիալիստների արգելված տպագրութիւնների և բրոշիւրների թւում, ինչպէս երևում է «Reichsanzeiger»—ի հրատարակած ցուցակից, համարվում է նոյնպէս և Լասսալի հռչակաւոր տեսը, «Bastiat—Schulze» վերնագրով։ Ցաւոնի է որ այս հրատարակութեամբ Լասսալը մշակեց իր ռամկասօցիալական թէօրիան, աշխատելով հերքել «Schulze-Delitzsch»-ի և «Bastiat»-ի տնտեսական ներդաշնակութիւնները վերնագրով գրքի սիստեմը։ «Reichsanzeiger» հրատարակում է հրովարտակներ, որոնք արգելում են Հանովերի ռամկասօցիալիստների ընկերութեան ընտրողական ժողովը մինչև հետեւեալ ընտրողութիւնների ժամանակ։

Մի քանի հրովարտակներ արգելում են ռամկապետական շաբաթական կամ օրական թերթեր Համբուրգում, Ֆրանկֆուրտում և Կեօլնում։

Հինգշաբթի օրը Լայպցիգում տպարանագործների ընկերութեան գործարանում պօլիցիական կառավարութիւնը բռնեց մի ժողովրդական յիշատակարան (almanach) 1879 թ. համար) և մի բրոշիւր Խեղճ Կոնրադ վերնագրով։

Հինգշաբթի առաւօտ հրատարակվեցաւ Բերլինում մի նոր լրագիր «Berliner Nachrichten» վերնագրով։ Չը նայելով որ դրա պրոգրամմայի մէջ գործ չէին դրված այնպիսի խիստ տերմիններ, ինչպէս սովորաբար լինում են ռամկասօցիալական թերթերի մէջ, այնու ամենայնիւ դա էլ բռնվեցաւ պօլիցիական վարչութենից, իբրև թէ դա լիներ «Berliner Freie Presse» լրագրի շարունակութիւնը միայն մի նոր անունով։

Բոլոր համարները գրաւվեցան հէնց վաճառվելու րոպէին, և ծախողների թղթատարները (portefeuille) ամենաանաչառ խուզարկութեան ենթարկվեցան։

ԱՆԳԼԻԱ

—

Հինգշաբթի երեկոյեան Ուլի Ֆլենտսիրի մէջ տեղի ունեցաւ մի մեծ ազատամտական ցուցմունք մի ազատամիտ ընկերութեան հաստատութեան մասին։

Պ. Գլադստոն երեկոյեան նախագահում էր մի ժողովրդական ժողովի, ուր Վեստմինստերի դուքսը առաջարկեց, և Պ. Օսբօրն Մորգան պաշտպանեց մի վճիռ որով նրանք վստահութիւն էին յայտնում առաջվայ մինիստրի հայրենասիրութեան մասին, և շնորհակալութիւն յայտնեցին այն աշխատանքի մասին, որով նա մերկացրեց և ընկճեց առաջին մինիստրի գաղտնի և խրոխտ քաղաքականութիւնը։

Պ. Գլադստոն խօսք վերցնելով ասաց, որ նա միայն իր պարտականութիւնն է կատարել պատերազմելով և դատապարտելով այս վերջին ժամանակներում կառավարութեան վարուելու կերպը։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Լրագրիները հաղորդում են որ ֆրանսիական տերութեան կողմից հրատարակված է համաշխարհային հանդիսի հաշիւը։ Այս տարվայ հանդէսը տուեց հինգ ամսվայ մէջ 9,736,068 ֆրանկ արդիւնք, այն ինչ 1867 թվի աշխարհահանդէսը տուեց միայն 6,450,694 ֆրանկ արդիւնք։ Ուշադրութեան արժանի է, որ վերև յիշված գումարի մէջ հաշված չէ այն մուտքի փողը, որ ստացված է աբօնեմէնտներից, նոյնպէս ազգային տօնի, յունիսի 30-ի ամբողջ մուտքի փողը, երբ հանդիսի այցելուների թիւը հասաւ մինչև 119,599 հոգի։

—Հոկտեմբերի 31-ին վախճանվեցաւ Փարիզում մի նշանաւոր անձն՝ Գարնիէ—Պաժէս, որ յայտնի էր որպէս գրող և քաղաքական անձնաւորութիւն։ Դեռ 1848 թվին Գարնիէ-Պաժէս ժամանակաւոր կառավարութեան անդամ էր և յետոյ անդամ ազգային պաշտպանութեան կառաւարութեան 1870 թվին։

Լրագրներից հաղորդված լուրերից երևում է, որ սենատորների նոր ընտրութեան մէջ Ֆրանսիայում մեծ մասամբ կընտրվեն հանրապետականները։ Երևում է որ հանրապետական կուսակցութեան մեծամասնութիւնը կը բաղկանայ մօտաւորապէս 12 մինչև 15 անդամներից։

—Լօնդօնից հեռագրում են «Wiener—Tagblatt» լրագրին, որ լորդ Սալիսբիւրի դիտաւորութիւն ունի դիմել բոլոր պետութիւններին մի շրջաբերականով, որի մէջ նա երեք կէտ կը յիշէ։ Առաջին, որ Բերլինի դաշնագրի զօրութեամբ ռուսները պէտք է պահէին Բօլգարիայում միայն 50,000 զօրք, իսկ նրանց այժմեան այդ երկրում պահվող զօրքը աւելի բազմաթիւ է, երկրորդ որ ռուսները վերջին ժամանակ անցան մինչև անգամ Արևելեան Բումէլիայի սահմաններից և մօտենում են Կ. Պոլսին։ Վերջապէս երրորդ, որ չէ կարելի թոյլ տալ Ռուսաստանի և Թիւրքիայի մէջ առանձին պայմանագրութեան կապելուն, որովհետև այդ կը հակառակէր Բերլինի դաշնագրութեան ոգուն։ Անգլիան կը պաշտպանէ դաշնագրութեան խիստ կատարումը, որովհետև նրա կարծիքով Թիւրքիան բարեխղճաբար է կատարում այդ դաշնագրութիւնը։

—Լրագիրները հերքում են այն լուրը թէ բօլգարները դիտաւորութիւն ունեն զինաւորված ընդդիմանալ Բումելիայի գործերը կարգադրող մասնաժողովին և արգելել նրանց ֆիլիպպոպոլ մտնել։ Բօլգարները, ասում է նրանց լրագիրներից մէկը, հարկաւորութիւն չունեն զէնքի գործածութեան մէջ։

—«Հավասի ընկերութիւնը» հաղորդում է, որ սուլթանը տեսակցութիւն ունէր Բեկեր-փաշայի հետ, որից յետոյ այս վերջինը ուղևորվեցաւ Զատալջա ամրոցների շինութիւնների վրա հսկելու համար։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ֆընէվից հեռագրում են «Times» լրագրին նոյեմբերի 1-ից հետեւեալը. Հէնց նոր լոյս տեսած Զվիցերիայի մեռածների ցուցակից երևում է՝ որ անցեալ տարվայ ընթացքում, այս երկրում եղել են 597 անձնասպաններ, որ իւրաքանչիւր 4,600 բնակչից մէկ տոկոս է կազմում։ Այսպիսի յարաբերութիւն ինքն ըստ ինքեան ներկայացնում է ամենամեծ համեմատութիւն քան թէ Եւրոպայի որ և իցէ մասնում։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՊԵՇՏ, 1/13 նոյեմբերի։ Այսօր կոմս Շուվալով հրաւիրված էր կայսր Ֆրանց-Յովսէփի մօտ մասնաւոր տեսակցութիւն ունենալու համար։

ՓԱՐԻԶ, 2/14 նոյեմբերի։ Ռուսաց դեսպան Օրլով յայտնեց Ֆրանսիական արտաքին գործերի մինիստրին, որ Ֆրանսիան, գործելով յօգուտ Ցունաստանի, կարող է յոյս դնել Ռուսաստանի գործակցութեան վրա։ Իշխան Լօբանով-Ռոստովսկի դրան համեմատ հրահանգներ ստացաւ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 նոյեմբերի։ «Голосъ» լրագրին Կ. Պոլսից հեռագրում են. «Թիւրքիայի լրագիրների յայտնութիւններին հակառակ դեռ չէ հրատարակված սուլթանի իրադէն, որով հաստատվում է Թիւրքիայի ասիական նահանգների վերանորոգութիւնների նախագիծը։ Ասում են, որ սուլթանը դեռ չէ ստորագրել այդ նախագիծը, իսկ այդ ձեւակատարութեան բացակայութեան պատճառով բոլոր գործը կասկածելի է համարվում։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 նոյեմբերի։ Պետական բանկի 5% տոմակը առաջին շրջանի արժէ 97 ր., երկրորդ 95 ր. 75 կ., երրորդ 95 ր., 50 կ., չորրորդ 95 ր. 75 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմակը արժէ 235 ր. 50 կ., երկրորդ 229 ր. 50 կ., արևելեան 91 ր. 75 կ., ոսկի 8 ր. 30 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ $23^{15}/_{16}$ պէնս։ Տրամադրութիւնը ամուր է։

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մամուլի տակից դուրս եկաւ
ՕՐԱՑՈՑՑ
ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅԻ
1879 Թ. համար.

Գինն է 15 կոպ. հարիւրով գնողներին 20% զեղչում կը լինի։ Օտարաքաղաքացիք ճանապարհածախք վճարումեն՝ հարիւր օրինակի համար — 1 ր ,,
յիսունի համար — ,, 60 կ

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՇՇՈՒԿԱՆԻՎԱՆ ՆԻԿՈՂՈՍՈՎ.

Յայտնում եմ Թիֆլիսի և օտար քաղաքների պատուելի հասարակութեանը, որ գնել եմ եւրօպական քաղաքներում 200 հատ ամենաընտիր կարելու մեքենաներ. այսինքն մեծ բալկօնաւոր ՏԵՒՏՕՆԻԱ, ՄԱՆՍՖԻԼԴ, ՎԵԼԼԵՐ-ՎԵԼՍՕՆ, զինջեր, մեդիուս, պօլլակ, շմիդտ, մավի առուծ, Սիմսոն, և ձեռքի մեքենաներ սիստեմ Բրունիա, Զերմանիա, Թէնանիա Ֆօրտունա, զինջեր Սակսոնիա, Լիտերվանցեր, շատուլա, և Վելլեր Վիլսոն շկատուլկայով։ Զը նայելով ահագին կուրսին ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ԱՄԵՆԱԷԺԱՆ ԳՆՈՎ։ Անվարձ սովորեցնում ենք ԳՈՐԾԱԾԵԼ մեքենան։ Ապահովում ենք ԵՐԵՔ տարի։ Վաճառատունը գտնվում է ՀԱՑՈՑ ԲԱԶԱՐՈՒՄ, ԳԱՍՊԱՐՕՎԻ ՏԱՆԸ։

Իվան Ստեփանեան Նիկողոսով

1—3

ԻՍԱՀ ԵԳՕՐԻՋ ՊԻՏՕԵՎԻ ԳՐԱՍԵՆԵԱԿՈՒՄ

Ծախում է 5% ԱՌԱՋԻՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ փոխառութեան ՏՈՄՍԱԿՆԵՐ և ԱՐԵՒԵԼԵԱՆ երկրորդ փոխառութեան օբլիգացիաներ։ Նոյնպէս գնում է ամեն տեսակ ՏՈԿՈՍԱԲԵՐ ԹՂԹԵՐ և կատարում է փոխարինութիւն ՄՕՍԿՎԱ հասարակ և հեռագրով։

Գրասենեակը ԲԱՑ է ԱՄԵՆ ՕՐ հասարակ օրերը առաւօտեան 10 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ և 6-ից մինչև 7 երեկոյեան, իսկ տօն օրերը առաւօտեան 10-ից մինչև 12 ժամ։ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ ԳՏՆՎՈՒՄ է Սօլլակում, Նադեժնայա փողոցի վրա, Իս. Ե. ՓԻԹՕԵՎԻ տանը։ 1—5

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ նոյեմբերի 10-ին ներկայ տարվայ իր ներկայութեամբ կը լինի աճուրդ առանց կրկնաճուրդի քաղաքին պատկանող 156⁸/₁₀ քառակուսի սաժէն դատարկ հողը ծախելու համար։ Այդ հողը գտնվում է II բաժնի 15-դ մասում գծային բատալիոնի զօրատան մօտ։ 2—3

ԳՐԻԳՈՐ ՆԱՍԻՐԵԱՆԻ ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ ԵՐԵՒԱՆԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱ

սատացվել են մեծ քանակութեամբ ՖՐԱԿԻ ԵՒ ՏՐԻԿՕԻ ՍԻՒՐՏԻԿՆԵՐԻ ՇՈՐԵՐ, որսորդական ԱՌԱՒՕՏԵԱՆ ԾՕՏԵՐ, ձմեռային ՊԱԼՏՕՆԵՐ և ՎԱՐՏԻԿՆԵՐ, երեխայոց հագուստներ, ՎԵՐԱՐԿՈՒ—ԽԱԼԱՏՆԵՐ զարդերով, նոյնպէս ընդունվում են ՊԱՏՈՒԷՐՆԵՐ զինուորական և քաղաքական հագուստների համար։ Ցոյս ունեմ, որ ինչպէս պատուիրողները նոյնպէս էլ գնողները ԲԱՒԱԿԱՆ ԿԸ ՄՆԱՆ։

Ծախվում է ՄԷԿ ՄԵԾ ԵՐԿԱԹԻ ԱՐԿՂ (կաստա) փողի համար։ Գնի համար կարելի է տեղեկանալ Կաթոլիկների եկեղեցու դիմաց Մելիք-Նուբարովի տանը։ 3—5

Սօֆիա Յարութիւնեան Թօջայեանց սրտի ցաւով յայտնելով իր ամուսին Նադեժդինի սօվետնիկ ՎԱՍԻԼ ՅՈՎՍԷՓԵԱՆ ԹՕՋԱՅԵԱՆՑԻ մահի մասին, խոնարհաբար խնդրում է ազգականներին և ծանօթներին հնարհ բերել յուղարկաւորութեան հանդիսին Շերմազան-Վարդանեանի տանից, որ գտնվում է Վելիասինովսկայա փողոցի վրա, դէպի Մօղնու սուրբ Գէորգ եկեղեցին, կիրակի օրը նոյեմբերի 5-ին, առաւօտեան 10 ժամին։ 2—2

Յանկանում են յանձնել մի ԲՆԱԿԱՐԱՆ, որ գտնվում է Իրակլեեվսկի փողոցի վրա, Բաստամովի տանը երկրորդ յարկում. 7 մաքուր սենեակներ, խոհանոց և ծառաների սենեակ։ Պայմանների մասին կարելի է իմանալ ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ԿՐՈՒՋԻՆՕՎԻՑ, ՈՐ ԲՆԱԿՎՈՒՄ է ՆՈՅՆ ՏԱՆ ներքին յարկում։ 4—10

ՔԱՐԱԾՈՒԽ „ԹՈՒՄԱՍՏԱՆ“ ՀԱԼՈՏԻ

(ՀԱՆՔԻՑ), ՈՐ ԳՏՆՎՈՒՄ է ԶԷԼՕԲԱՆԻ ԱՐՈՒԱՐՁԱՆԻ ԿՈՆՍԻԷԲԱ ԳԻՒՂՈՒՄ

ԸՆԿ. ՆԷՅՄԱՆ—ՀԷՆԻՆԳ

Ծախվում է ՇԷՆԻՆԳԻ ՊԱՎԻԼԻՕՆՈՒՄ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՄԻԱՍԻՆ ԱՄՈՂՋ ՎԱԳՕՆՆԵՐՈՎ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԿԱՅԱՐԱՆԻՑ ՊՈՒԴԸ 25 ԿՕՊ., ԻՍԿ ՓՈՔՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԵԼԻ է ԳՆԵԼ Ք. ԼԱՔԻ ՄԷՋ ԳՏՆՎՈՂ ՊԱՀԵՍՏԻՑ ՊՈՒԴԸ 28 ԿՕՊԷԿՈՎ։

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅՈՒՄ

(ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԷՐԷՈՒՄ)

Վաճառվում են Բերլինի կոնգրէսին ներկայացած Հայ-պատգամաւորների լուսանկար պատկերները՝

1. ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ մեծ դիրքով (կաբինէտնի) . . . . . 60 կ.
2. ԽՈՐԷՆ ՆԱԲԲԷՑ փոքր դիրքով (վիզիտնի) . . . . . 30 „
3. ԽՈՒՄԲ վերոյիշեալների իրանց քարտուղարներով . . . . . 60 „

Օտար քաղաքներից դուրսարով գնողներին 50 և 25 կ. իջեցանչիւրը։

1—3

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅՈՒՄ

(ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԷՐԷՈՒՄ)

Վաճառվում են հետեւեալ հայերէն գրքերը՝

	Ր.	Կ.
1. Ն. Տէր-Գևոնդեան՝ Մայրենի լեզու. ա. տարի վեցերորդ տիպ.		35
2. „ „ բ. տարի չորրորդ տիպ.		40
3. „ „ գ. և դ. տ. երկր. տիպ.		70
4. Դ. Աղայեանց՝ Ուսումն Մայրենի լեզուի, երրորդ տիպ.	—	15
5. Տէր-Ստեփանեանի՝ Սկզբունք քրիստոնէական հաւատոյ.	—	50
6. Գ. արքեպ. Այվազեան՝ Նախակրթանք գրաբար լեզուի մ. ա. հինգերորդ տիպ.	—	40
7. Տէր-Դաւթեանց՝ Русское Слово	—	35
8. Աբովեանց՝ Հայոց պատմութիւն երկրորդ տիպ.	—	60
9. Հատընտիր ընթերցուածք ի մատենագրաց նախնեաց՝ հանդերձ ծանօթութեամբք Վիէննա Թոռնեան՝	4	—
10. Թորոս Լևոնի պատմական վէպ ազգ. կեանքից	1	—

Այս օրերս կը ստանանք Վենետիկից Առաքեան բառարաններ, Հայաստանի քարտէզներ և ընտիր մատենագիրների աշխատութիւններից շատերը։

ՆՈՅԵՄԲԵՐԻ 4. ՏԵՂԵԿԱՑՈՑՑ ԹԻՖԼԻՍ 1878.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ
(Նոյեմբերի 3-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պօլիմպերիալը)	8	50
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1550	—
Հին 20 կ. 72 պր. 1000 „	1260	—
Վիգրիշնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 „	253	—
Երկրորդ 5% վիգրիշնի „	229	—
Մարսելի կուրսը 251½—	100	—
Լօնդոնի կուրսը Օշեռայի վրա.	10	10
Վենայի կուրսը ածէ 121 դ	100	—
Դաւրեժի բարաթը. . .	5	70
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .	315	—
Փօթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	102	—
Շաքարը բրօցկու . .	7	40
„ միւս տեսակը.	7	35
„ չաքարաւազը.	6	10
„ տրանզիտը. .	6	—
„ մաքսը վճարած	11	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	7	50
Միւս տեսակը հին սերմից.	7	—
Բուրդը թուշի . . .	7	25
„ թարաքամի .	4	—
Աւիւր Շորագալու . .	1	80
„ Երևանի. . . .	—	—
Գարին.	1	30
Մոմը ընճաճարպի (стеар.)	12	50
Մետաքս Նուխվայ. .	210	—
Կախեթունը. . . .	140	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	45	—
Ֆրիզոնը (լաստը) Ագուլեաց	55	—
Կոֆէն մօկօր. . . .	27	—
„ լիմանի . . .	22	—
„ մարտինկօյինը	18	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան .	2	
Աւստրիա . .	3	
Անգլիա. . . .	4	
Գերմանիա. . .	2	88
Ֆրանսիա . . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ
(Վէրայի վրա № 38)

Ծննդականների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ. Առանձին սենեակներում ամիսը 30 — 50 ռուբլ։ Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 ռուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 ռուբլ ամսական։

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան։ Բժշկապետ Աննաև։

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան։ Մինչև Միխայլովօ (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ։

	առաւ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլովօ. .	1. 29	11. 57
Ռիօն . . .	6. 47	
Փօթի . . .	9. 40	

	առաւ.
Փօթիից . .	9. 13
Ռիօն . . .	12. 13
Միխայլովօ. .	5. 39
Գօրի. . . .	7. 5
Թիֆլիս. . .	9. 31

	1 կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. . .	3. 20	2. 40	1. 33
Սուրամ. .	5. 22	3, 92	2, 18
Ռիօն. . .	9.	6. 75	3. 75
Փօթի . .	13. 1	9. 75	5. 42

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փօստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7։ Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան։

Ռուսաստանից և Արտասահմանից փօստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր։ Բաղուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փօթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Նուխու տրակտից չորեքշաբթի և կիրակի։ Բելիկլիչի տրակտից երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿՆԵՐ

	Կոպ.
Բաց նամակ արժէ .	4
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան . .	8
Հնդկաստան . . .	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը ժամը 9-ից մինչև 1 ժամը կէսօրից յետոյ։

Երկուշաբթի. Լիսիցեվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւններ, Բակստ վեներական և կաշու հ., Քուչարեանց վիրաբուժական և կանանց հիւանդութիւններ։

Երեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Բակստ կուրծքի և ներվային հ., Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան. Բէյլիս աչքի հ.։

Չորեքշաբթի. Լիսիցեվ ներքին հ., Բակստ վեներական և կաշու հ.։

Հինգշաբթի. Վէրմիշէվ ներքին հ., Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների։

Ուրբաթ. Լիսիցեվ ներքին հ. Բակստ կրծքային և ջղային հ., Ա. Բախուտով կանանց և երեխաների հ. և մանկաբարձութեան։

Շաբաթ. Վէրմիշէվ ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Բակստ վեներական և կաշու հ., Բէյլիս աչքի հիւանդութիւններ։

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—ԶԱՔԱԹԱԼԱ. Մ. Բ. Այս մենք էլ ցանկանում ենք ասել այդտեղից ուղարկված նամակներ, բայց մինչև այժմ մի օրինաւոր գրուածք չենք ստացել։ Փորձեցէք գրել, եթէ ձեր նամակները լաւ կը լինեն ուրախութեամբ կը տպենք։ Աշխատեցէք, որ նամակները բազմակողմանի լինեն։ Մենք էլ շատ ցաւում ենք, որ մի քանի քաղաքներից կամ բոլորովին նամակներ չենք ստանում, կամ շատ քիչ ենք ստանում։ Իւրաքանչիւր նամակից, որ փոքր իշատէ օրինաւոր է, օգուտ են քաղում։

—ԳԱՆՁԱԿ. Ա. Գրվեցէք «Մասիսին»։ Պէտք է դիմել Կ. Պոլիս ուղղակի խմբագրատանը և ձեր հացէն հաղորդել։ Նամակը մի քանի փոփոխութեամբ տպեցինք։

—ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼ. Մ. Ք. Տ. Պ. Չեզ արդէն պատասխանեցինք։ Նամակը շատ երկար է։

Дозволено Цензурою 2 Ноября 1878 г. Тифлисъ Типографія Мартиросіанца Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ